

Ցմահ ազատագրկման դատապարտված անձանց վիճակը

*Քաղվածք 25-րդ Ընդհանուր զեկույցից /
2016թ. Ապրիլ*

Նախնական դիտարկումներ

67. 2000թ.-ի իր գործունեության մասին 11-րդ Ընդհանուր զեկույցում ԽԿԿ-ն հակիրճ անդրադարձել է ցմահ և այլ երկարաժամկետ ազատագրկման դատապարտված անձանց խնդրին: Մասնավորապես, այն մտահոգություն է հայտնել, որ այդ բանտարկյալների համար հաճախ չեն ապահովվել պատշաճ նյութական պայմաններ, միջոցառումներ և մարդկային շփում, և որ նրանք հաճախակի ենթարկվել են հատուկ սահմանափակումների, որոնք կարող են սրել նրանց երկարաժամկետ ազատագրկման վնասաբեր ազդեցությունը: Կոմիտեն համարում է, որ Եվրոպայում ցմահ ազատագրկման դատապարտված անձանց իրավիճակը վերանայելու ժամանակը հասունացել է՝ հաշվի առնելով վերջին 15 տարիների ընթացքում իրականացրած իր այցելությունների հիման վրա Կոմիտեի կուտակած փորձը և եվրոպական և համընդհանուր մակարդակում տեղի ունեցող զարգացումները, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ Rec (2003) 23 հանձնարարականը քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ցմահ ազատագրկման դատապարտված անձանց և երկարաժամկետ ազատագրկման դատապարտված այլ անձանց պատժի կրումը կազմակերպելու վերաբերյալ¹:

Ցմահ ազատագրկումներ

68. ԽԿԿ-ի համար ցմահ ազատագրկումը անորոշ պատիժ է, որը դատարանը կիրառում է քրեական հանցագործություն կատարելու անմիջական հետևանքով, որը պահանջում է, որպեսզի բանտարկյալը քրեակատարողական հիմնարկում պահվի մինչև իր բնական կյանքի ավարտը կամ մինչև դատական, քվազի-դատական, գործադիր կամ վարչական գործընթացի համաձայն ազատ արձակումը, ինչի արդյունքում վճիռ է կայացվում, որ ազատագրկված անձն այլևս վտանգ չի ներկայացնում լայն հասարակության համար: Ազատագրկման նվազագույն ժամկետը,

¹ Տես նաև Եվրոպական բանտային կանոններ (2006) և վերջերս վերանայված՝ Բանտարկյալների հետ վարվեցողության ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (*Nelson Mandela Rules* - 2015):

որը պետք է կրի ազատագրկված անձը նախքան պայմանական ազատումից օգտվելը, յուրաքանչյուր երկրում տարբեր է, ընդ որում ամենակարճը 12 տարի է (օրինակ՝ Դանիայում և Ֆինլանդիայում) և 15 տարի (օրինակ՝ Ավստրիայում, Բելգիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում), իսկ ամենաերկարը՝ 40 տարի (օրինակ՝ Թուրքիայում՝ որոշակի բազմակի հանցագործությունների դեպքում): Ցմահ ազատագրկում կիրառող երկրների մեծ մասում նվազագույն ժամկետը տատանվում է 20-ից 30 տարի: Միացյալ Թագավորության դատական համակարգերում ազատագրկման նվազագույն ժամկետը որոշվում է դատավճռի կայացման պահին առաջին ատյանի դատավորի կողմից. այս առումով օրենքը չի նախատեսում բացարձակ նվազագույն ժամկետ: Մի շարք այլ երկրներ (օրինակ՝ Բուլղարիան, Լիտվան, Մալթան, Նիդեռլանդները, և որոշ հանցագործությունների համար Հունգարիան, Սլովակիայի Հանրապետությունը և Թուրքիան) չունեն պայմանական ազատման համակարգ ցմահ ազատագրկման դատապարտված անձանց համար, այնպես որ կյանքը կարող է բառացիորեն նշանակել կյանք (տես նաև 73-րդ պարբերությունը): Մյուս կողմից հատկանշական է, որ Եվրոպայի խորհրդի մի շարք անդամ պետություններում ցմահ ազատագրկում չկա օրենսգրքում²: Փոխարենը՝ ծանրագույն հանցագործությունների համար նրանք ունեն երկարաժամկետ ազատագրկման սահմանված պատիժներ, որոնք սովորաբար 20-ից 40 տարով են:

Ցմահ ազատագրկման հասկացության պատմությունը

69. Պատմության ընթացքում ցմահ ազատագրկումն ի վերուստ կապված է եղել մահապատժի հետ և աստիճանաբար այլընտրանքային պատիժ է դարձել ամենածանր հանցագործությունների համար: Սակայն այս փոխարինման նախնական նպատակը դատապարտված անձի իրավիճակը մեղմացնելը չի եղել: Հակառակը, դարեր շարունակ պահպանվող միջնադարյան տեսակետն այն էր, որ ցմահ ազատագրկումը ծանր աշխատանքի և մեկուսի բանտարկության համակցությամբ հանցագործների կողմից կրնկալվի որպես մահվան ավելի վատ այլընտրանք: Նմանապես՝ մահապատժի պահպանման փաստարկներից մեկը հենց այն էր, որ ցմահ ազատագրկումը ծանր աշխատանքի հետ միասին ավելի շատ տառապանք կարող է պատճառել տվյալ անհատին և լինել ավելի դաժան, քան մահապատիժը: Ներկայում այն տեսակետը, թե ցմահ ազատագրկում (կամ այդ առումով ցանկացած այլ պատիժ) կրող անձինք պետք է լրացուցիչ պատժվեն քրեակատարողական հիմնարկի պայմանների առանձնակի խստությամբ, ակնհայտորեն անընդունելի է: Այնուհանդերձ, նման տեսակետը դեռևս խորն արմատավորված է եվրոպական տարբեր երկրների հանրային կարծիքում:

Ցմահ ազատագրկման հասկացությունը ներդրվել է 1990-ականներին Եվրոպայի խորհրդի անդամ շատ պետություններում մահապատժի վերացման մասին Մարդու իրավունքների կոնվենցիայի Թիվ 6 արձանագրության վավերացումից հետո: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունում վերջին անգամ մահապատիժ իրականացվել է 1997թ.-ին, իսկ 2013 թ.-ից ի վեր Եվրոպան եղել է մահապատժից ազատ գոտի՝ օրենքով (բացառությամբ՝ Բելառուսից)³: Այնուհանդերձ, շատ երկրներում համարում էին, որ

² Օրինակ՝ Անդորան, Բոսնիա և Հերցեգովինան, Խորվաթիան, Մոնթենեգրոն, Պորտուգալիան, Սան Մարինոն, Սերբիան, Սլովենիան և Իսպանիան: Բացի այդ, գործնականում ցմահ ազատագրկում երբևէ չի կիրառվել Իսլանդիայում և Լիխտենշտեյնում:

³ Ռուսաստանի Դաշնությունում մորատորիում է սահմանվել:

հանրությունը կաջակցի մահապատժի վերացմանը միայն այն դեպքում, եթե դրան փոխարինած պատիժը բավարար պատժիչ լինի: Հետևաբար, մահապատժի դատապարտված անձանց պատիժը փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ, որի կիրառման հետ կապված, սակայն, խորաքնին պլանավորում չի իրականացվել: Միննույն ժամանակ ԽԿԿ-ի գոյության 25 տարիների ընթացքում արձանագրվել է ցմահ ազատազրկման դատապարտումների թվի աճ: Սա հիմնականում պայմանավորված է երկու գործոնով՝ Եվրոպայում մահապատժի վերացմամբ կամ կասեցմամբ և դատավճիռների քաղաքականությամբ՝ անդամ պետություններում ծանր հանցագործությունների հետ կապված: Առկա ամենավերջին վիճակագրությունը⁴ ցույց է տալիս, որ 2014թ.-ին Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում եղել է, ընդհանուր առմամբ, շուրջ 27,000 ցմահ ազատազրկման դատապարտված անձ: 22 երկրների վիճակագրության համաձայն, որոնց համար մատչելի են առավել երկար ժամանակահատվածի համապատասխան տվյալներ, ցմահ ազատազրկման դատապարտված անձանց թիվը 2004թ.-ից մինչև 2014թ.-ն աճել է 66%-ով: Բացի այդ, 2014թ.-ին Եվրոպայի խորհրդի տարբեր անդամ պետություններում (մասնավորապես՝ Միացյալ Թագավորությունում (Անգլիա և Ուելս), Գերմանիայում, Իտալիայում և Շվեյցարիայում) շուրջ 7,500 դատապարտյալ անվտանգության կամ հանրային պաշտպանության նկատառումներով կալանքի տակ է պահվել անորոշ ժամանակով:

70. 1990-ականներին կենտրոնական և արևելյան Եվրոպայի նախկին կոմունիստական երկրներում 20-35 տարվա ժամկետ էր սահմանվում բոլոր մեղմացված պատիժների և նոր ցմահ ազատազրկումների համար՝ առանց հաշվի առնելու որևէ անհատական գործոն մինչև այդ ժամկետի ավարտը: Նմանապես՝ մի շարք պետություններում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց համար չեն մշակվել ռեժիմներ՝ հաշվի առնելով նրանց անհատական վիճակը: Այդպիսի ազատազրկված անձինք համարվում էին «վտանգավոր», ովքեր կարիք ունեին մշտական խիստ հսկողության: Այժմ, 20-25 տարի անց, երբ որոշ ազատազրկված անձանց համար մոտենում է պայմանական ազատման դիմելու ժամանակը, ակնհայտ է դառնում, որ քիչ բան է արվել այդպիսի ազատազրկվածներին հետ դեպի համայնք ազատ արձակման իրատեսական հույս տալու ուղղությամբ: Իսկապես, քրեակատարողական հիմնարկում բացասական վերաբերմունքի երկարատև ժամանակաշրջանը, ընտանիքի և բանտից դուրս ընկերների հետ հարաբերություններ պահպանելու իրավունքի խիստ սահմանափակումը և ազատ արձակման նախապատրաստման կամ վերաինտեգրման պլանավորման լիովին բացակայությունը կարող են լրջորեն խաթարել դրսի համայնքում գործառնելու բանտարկյալների կարողությունը:

Վերը նշված երկրներից մի քանիսը սկսել են ճանաչել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ազատ արձակման նախապատրաստելու անհրաժեշտությունը: Այդ երկրները, ինչպես նաև նրանք, որոնք վերացրել են մահապատիժը շատ ավելի վաղ, սահմանել են դատական, քվազի-դատական, վարչական կամ գործադիր միջոցներ՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ազատ արձակումն անհատական հիմքով քննելու նպատակով: Մշակվել են

⁴ Եվրոպայի խորհրդի տարեկան քրեական վիճակագրություն (SPACE) 2004.8 և 2014.7:

ազատագրկվածների անհատական վարքը հաշվի առնող ռեժիմներ՝ նրանց առաջարկելով կրթություն և աշխատանք: Բացի այդ, իրենց պատիժը կրելու ընթացքում հնարավորինս ամրապնդվել է արտաքին աշխարհի, հատկապես՝ ընտանիքների հետ կապը, իսկ նրանց հետ աշխատանքում ներգրավվել են հասարակական և բարեգործական կազմակերպություններ: Այս ամենը նպաստում է թե՛ պատիժը կրելու ընթացքում նրանց «մարդկությունը» պահպանելուն և թե՛ նրանց ազատ արձակմանը նախապատրաստելուն: Ցմահ ազատագրկման դատապարտված անձանց կառավարումը խնդրահարույց է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի համար դրական միջավայր պահպանելու առումով, մասնավորապես՝ ցմահ ազատագրկման առաջին տասնամյակի ընթացքում, ինչպես նաև այն պատճառով, որ այս բանտարկյալներից ոմանք ծերանում են: Այս պետությունների փորձը գիտելիքների լավ աղբյուր է՝ առաջարկելու հարգանք պահպանելու մեթոդներ այն ազատագրկված անձանց իրավունքների նկատմամբ, ովքեր կրում են պատիժ անորոշ ժամկետով, թեև անորոշությունն ինքնին, անկախ տևողությունից, առանձնահատուկ հոգեբանական ճնշում է ստեղծում բանտարկյալի համար:

ԽԿԿ-ի բացահայտումներն այցելությունների ժամանակ

71. ԽԿԿ-ն այցելել է մեծ թվով ազատագրկման վայրեր ողջ Եվրոպայում, որտեղ տեղավորված են եղել ցմահ ազատագրկման դատապարտված անձինք: Այս անձանց պահելու պայմանները մեծապես տարբերվում էին զանազան հաստատություններում: Շատ երկրներում ցմահ ազատագրկման դատապարտված անձինք, որպես կանոն, պահվում էին ազատագրկված այլ անձանց հետ և օգտվում միևնույն իրավունքներից ռեժիմի (աշխատանք, կրթություն, ժամանցային միջոցառումներ) և արտաքին աշխարհի հետ շփման առումով, ինչպես մյուս ազատագրկվածները:

Սակայն մի շարք երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Բուլղարիայում, Վրաստանում, Լատվիայում, Մոլդովայում, Ռումինիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Թուրքիայում (միայն ծանրացուցիչ ցմահ ազատագրկման դատապարտված անձինք) և Ուկրաինայում⁵ ցմահ ազատագրկման դատապարտված անձինք, որպես կանոն, պահվում էին այլ ազատագրկված անձանցից առանձին: Մի քանի երկրներում ԽԿԿ-ն նկատել է, որ ցմահ ազատագրկման դատապարտված անձինք նաև ենթարկվում են շատ աղքատ ռեժիմի և անվտանգության խստագույն միջոցների: Օրինակ՝ ցմահ ազատագրկման դատապարտված անձինք փակված էին իրենց խցերում (միայնակ կամ զույգերով) օրական 23 ժամ, նրանց չէր թույլատրվում հաղորդակցվել նույնիսկ այլ խցերից ցմահ ազատագրկման դատապարտվածների հետ (անգամ բացօթյա զբոսանքի ժամանակ), չէր թույլատրվում աշխատել իրենց խցից դուրս կամ ընդհանրապես չէր առաջարկվում որևէ նպատակային գործունեություն: Բացի այդ, մի շարք երկրներում ցմահ ազատագրկման դատապարտված անձինք մշտապես ձեռնաշղթաներով էին դուրս բերվում և/կամ ամեն

⁵ Որոշ երկրներում (օրինակ՝ Չեխիայի Հանրապետություն, Լիտվա և Սլովակիայի Հանրապետություն) ցմահ ազատագրկման դատապարտված անձինք պետք է որոշակի ժամանակահատված (10-15 տարի) բանտարկություն կրեն առանձին մասնաշենքում նախքան նրանց տեղափոխելը կալանավայրի սովորական մասնաշենք, որտեղ նրանք կարող են հաղորդակցվել այլ ազատագրկվածների հետ:

անգամ խցից դուրս գալիս մերկացվում էին խուզարկության համար: Որոշ հաստատություններում իրենց խցից դուրս ցանկացած տեղաշարժի ընթացքում խնդրո առարկա բանտարկյալներին լրացուցիչ ուղեկցում էին երկու սպա և մեկ պահապան շուն:

Բացի այդ, ԽԿԿ-ի այցելած մի շարք հաստատություններում բանտարկյալները ենթարկվում էին հնուց մնացուկային կանոնների, որոնց միակ նպատակն էր պատժել և նվաստացնել այդ բանտարկյալներին (օրինակ՝ օրվա ընթացքում մահճակալին պառկելու արգելք, պարտականություն արտասանելու քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը, որի համաձայն իրենք դատապարտվել էին, ամեն անգամ, երբ սպան բացում էր խցի դուռը, որոշակի գույնի բանտային համազգեստ հագնելու պարտականություն և այլն): ԽԿԿ-ի կարծիքով՝ նման գործելակերպերն ակնհայտորեն ունեն ապամարդկայնացնող, նվաստացնող ազդեցություն և անընդունելի են:

Հարկ է նշել նաև, որ որոշ երկրներում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցման իրավունքը (մասնավորապես՝ տեսակցությունների հետ կապված) ծայրահեղ սահմանափակ էր և զգալիորեն ավելի պակաս այլ ազատազրկվածների համեմատ:

72. Վերոնշյալ երկրներից մի քանիսում վերջին տարիներին քրեակատարողական հիմնարկի իշխանությունների կողմից քայլեր են ձեռնարկվել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պատժի կրման պայմանները մեղմելու ուղղությամբ, մասնավորապես՝ բանտարկյալներին առաջարկելով աշխատանք և այլ նպատակային գործունեություն (ներառյալ՝ ցմահ ազատազրկման դատապարտված այլ անձանց հետ հաղորդակցման ընդլայնում) և հետևելով ավելի անհատականացված մոտեցման, երբ հերթը հասնում է անվտանգության միջոցառումների կիրառմանը: Այնուհանդերձ, իրավիճակը բավարար դարձնելու համար դեռևս շատ բան կա անելու: Ցավոք, պատիժների կիրառման վերաբերյալ քաղաքականությունը դեռևս չափազանց հաճախ հիմնված է այն կանխավարկածի վրա, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձինք, որպես կանոն, առանձնապես վտանգավոր են, և որ այդ բանտարկյալների նկատմամբ կիրառվող ռեժիմը պետք է այս կամ այն կերպ պատժիչ բնույթ կրի:

ԽԿԿ-ն ցանկանում է մեկ անգամ ևս շեշտել, որ ազատազրկված անձանց կանոնավոր ձեռնաշղթայելը կամ մերկացնելով խուզարկելը որևէ արդարացում չի կարող ունենալ, առավել ևս, երբ կիրառվում է արդեն իսկ անվտանգ միջավայրում: Կոմիտեն նաև բազմիցս նշել է, որ բանտի ներսում շների օգտագործումն անընդունելի է: Այս կապակցությամբ Կոմիտեն ցանկանում է շեշտել, որ տարբեր եվրոպական երկրներում փորձը ցույց է տվել, որ *ցմահ ազատազրկման դատապարտված անձինք անպայմանորեն ավելի վտանգավոր չեն, քան մյուս ազատազրկվածները* (տես նաև 76-րդ պարբերությունը): Բացի այդ, ըստ էության, ցմահ ազատազրկման դատապարտված անձինք, ինչպես և բոլոր ազատազրկվածները, *ուղարկվում են քրեակատարողական հիմնարկ որպես պատիժ, այլ ոչ թե պատժվելու համար:*

«Կյանք նշանակում է կյանք»

73. Ինչպես վերը նշվեց, Եվրոպայի խորհրդի մի շարք անդամ պետություններում անձը կարող է դատապարտվել ցմահ ազատազրկման առանց պայմանական ազատման հեռանկարի: Սա հայտնի է որպես «փաստացի կամ ամբողջ կյանքի դատավճիռ»: ԽԿԿ-ն իր կատարած այցերի շրջանակում հրապարակած մի շարք զեկույցներում քննադատել է նման դատավճիռների բուն սկզբունքը՝ արտահայտելով լուրջ տարակուսանք այն փաստի առնչությամբ, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձը մեկընդմիջտ համարվում է վտանգավոր և զրկված է պայմանական ազատման որևէ հույսից (բացառությամբ կարեկցանքի հիմքով կամ ներման դեպքերի): Կոմիտեն պնդում է, որ առանց ազատման որևէ իրական հեռանկարի անձին ցմահ ազատազրկելն ինքնին, իր կարծիքով, անարդկային է: Հարկ է նաև նշել, որ նույնիսկ Միջազգային քրեական դատարանի (կամ հատուկ միջազգային ատյանների) կողմից ծանրագույն հանցագործությունների համար (ինչպիսիք են ցեղասպանությունը, պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները) դատապարտված անձինք որոշակի փուլում սկզբունքորեն կարող են օգտվել պայմանական (վաղաժամկետ) ազատումից:

Իսկապես, ԽԿԿ-ն համարում է, որ բանտարկության դատավճիռը, որն ազատ արձակման որևէ հնարավորություն չի ընձեռում, ինքնին բացառում է ազատազրկման կարևոր հիմնավորումներից մեկը՝ վերականգնման հնարավորությունը: Թեև պատիժը և հանրային պաշտպանությունը բանտարկության կարևոր տարրեր են, վերականգնման և համայնք վերադառնալու որևէ հույսի ի սկզբանե բացառումը նպաստում է ազատազրկվածի ապամարդկայնացմանը: Սա չի նշանակում, որ ցմահ ազատազրկման դատապարտված բոլոր անձինք պետք է վաղ թե ուշ ազատ արձակվեն: Առանցքային նշանակություն ունի հանրային պաշտպանությունը: Սակայն բոլոր նման պատիժները որոշակի փուլում պետք է ենթակա լինեն նշանակալի վերանայման՝ ելնելով պատժի անհատականացված պլանավորման խնդիրներից, որոնք պետք է սահմանվեն պատժի սկզբում և ապա պարբերաբար վերանայվեն: Դա ոչ միայն հույս կտա, այլև նպատակ կդառնա ազատազրկված անձի համար, որին հասնելու համար նա կդրսևորի դրական վարքագիծ: Դա նաև կօգնի քրեակատարողական հիմնարկի վարչակազմին այն անհատների հետ առնչվելիս, ովքեր այլապես հույս կամ կորցնելու որևէ բան չունեն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերջին տարիներին քննել է մի շարք գործեր, որոնցում ներպետական դատարանները ցմահ ազատազրկում են կիրառել բանտարկյալների նկատմամբ՝ առանց վաղաժամկետ կամ պայմանական ազատման հնարավորության, և որոնցում, բացառությամբ կարեկցանքի կամ ծայրահեղ բացառիկ հանգամանքների, ցմահ ազատազրկման դատավճիռը հստակ նշանակել է ազատազրկում մինչև կյանքի վերջը: Առ այսօր Դատարանի ամենահեղինակավոր վճռում, որը կայացրել է Մեծ Պալատը *Վինթերը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության*⁶ գործով, նշվում է, որ պետության համար անձին ազատությունից զրկելը, առանց նրան երբևէ կրկին ազատություն ստանալու առնվազն հնարավորություն ընձեռելու, անհամատեղելի է եղել մարդկային արժանապատվության հետ, ուստի և հակասել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածին:

⁶ Տես՝ Վինթերը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Vinter and Others v. the United Kingdom) [ՄՊ], գանգատներ թիվ 66069/09, 130/10 և 3896/10, 2013թ. հունիսի 9:

Դատարանի գոյություն ունեցող նախադեպային իրավունքից կարելի է բխեցնել երեք հիմնական հետևանք: Անդամ պետությունների *օրենսդրությամբ* այսուհետ պետք է պատիժը կրելու ընթացքում նախատեսվի ժամանակ, երբ կընձեռվի այդ դատավճիռը վերանայելու *հնարավորություն*: Բացի այդ, անդամ պետությունները պետք է սահմանեն *ընթացակարգ*, որի համաձայն այդ դատավճիռը կվերանայվի: Եվ վերջապես, քրեակատարողական հիմնարկում պատժի կրումը պետք է կազմակերպվի այնպես, որպեսզի ցմահ ազատազրկման դատապարտված անձանց *վերականգնվելու* հնարավորություն ընձեռվի:

Ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվելու հիմնական նպատակները և սկզբունքները

74. Ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվելու նպատակները և սկզբունքները հռչակված են Նախարարների կոմիտեի թիվ Rec (2003) 23 հանձնարարականում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ցմահ ազատազրկման դատապարտված անձանց և երկարաժամկետ ազատազրկման դատապարտված այլ անձանց պատժի կրումը կազմակերպելու վերաբերյալ, որը, ԽԿԿ-ի կարծիքով, շարունակում է մնալ առավել պատշաճ և համապարփակ վկայակոչվող փաստաթուղթը բանտարկյալների այս խմբի համար: Այդ սկզբունքները հետևյալն են՝

- *անհատականացման սկզբունք*՝ ցմահ ազատազրկման յուրաքանչյուր դատավճիռ պետք է հիմնված լինի պատժի անհատականացված պլանին՝ հաշվի առնելով ազատազրկման դատապարտված անձի կարիքները և առնչվող ռիսկերը,
- *նորմալացման սկզբունք*՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձինք պետք է բոլոր ազատազրկվածների նման ենթակա լինեն միայն այն սահմանափակումներին, որոնք անհրաժեշտ են նրանց ապահով և կանոնավոր բանտարկության համար,
- *պատասխանատվության սկզբունք*՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձինք պետք է հնարավորություն ունենան դրսևորելու անձնական պատասխանատվություն առօրյա բանտային կյանքում, ներառյալ՝ մասնակցությունը պատժի պլանավորմանը ,
- *անվտանգության և ապահովության սկզբունքներ*՝ հստակ տարբերակում պետք է կատարվի այն ռիսկերի, որ ներկայացնում են ցմահ ազատազրկման դատապարտված անձինք արտաքին համայնքի համար և այն սպառնալիքների միջև, որ նրանք ներկայացնում են այլ բանտարկյալների և բանտում աշխատող կամ բանտ այցելող անձանց համար,
- *չմեկուսացման սկզբունք*՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձինք չպետք է մեկուսացվեն զուտ իրենց պատժի հիմքով, այլ նրանց պետք է թույլատրվի հաղորդակցվել այլ ազատազրկվածների հետ՝ հիմնվելով ռիսկերի գնահատման վրա, որը պետք է հաշվի առնի բոլոր համապատասխան գործոնները,
- *առաջընթացի սկզբունք*՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պետք է խրախուսել և իրենց պատիժը կրելու ընթացքում պայմանների և ռեժիմների բարելավման հնարավորություն ընձեռել՝ հաշվի առնելով անհատական վարքը և ծրագրերի, անձնակազմի ու այլ ազատազրկված անձանց հետ համագործակցությունը:

Այս սկզբունքների հաստատումը գործնականում

75. Քրեակատարողական հիմնարկները պետք է լինեն ապահով, անվտանգ և կանոնակարգված՝ հանուն բոլոր նրանց, ովքեր կապված են դրանց հետ: Քանի որ ազատագրվումը, հատկապես՝ անհայտ ժամանակով, ըստ էության, վնասակար է գրեթե բոլոր մարդկանց համար, պետք է քայլեր ձեռնարկել վնասը նվազեցնելու ուղղությամբ: Այդ նպատակին հասնելու կարևոր եղանակ է ցմահ դատապարտյալների հնարավոր ազատ արձակման հետ կապված առաջին վերանայման որոշակի ժամկետի նշանակումը, ինչպես նաև յուրաքանչյուր ազատագրվածի համար պատժի կրման անհատական ծրագրի կազմումը, որը պարունակում է այնպիսի իրատեսական միջոցառումների շարք, որոնք կառաջնորդեն դատապարտյալին դեպքի այդ օրը: Անշուշտ, այդ ծրագիրը կպահանջի կանոնավոր վերանայում, սակայն նպատակը պետք է լինի դատապարտյալի ջանքերով դրա մշակման մեջ և նրան արտահայտվելու և իր կատարողականի վերաբերյալ կարծիք լսելու հնարավորություն տալը: Այդպիսի ծրագիրը պետք է երաշխավորի, որ բոլոր ցմահ դատապարտյալները նախքան առաջին վերանայման օրը հնարավորություն ունեն անդրադառնալու իրենց վիճակի բոլոր կողմերին: Դա նաև պետք է նկատի առնի այն ժամանակը, որը դատապարտյալը կանցկացնի ավելի ցածր աստիճանի վերահսկողության պայմաններում, հատկապես՝ այդ ժամանակահատվածի վերջում՝ համայնք վերադառնալու ժամանակը: Ծրագիրը պետք է երաշխավորի և, որ ռիսկերի և կարիքների կառավարման պլանը իրագործելի է բանտային միջավայրից դուրս: Քանի որ համայնքում շարունակական խնամքի տրամադրումը կարևոր նշանակություն ունի հաջող վերաինտեգրման համարայն պետք է նախատեսել ազատ արձակման օրվանից շատ ավելի վաղ շրջանում:

Անհատականացում

76. Այս ընդհանուր սկզբունքների ապահովման համար պահանջվում է պատժի կրման պլանավորման անհատականացում: ԽԿԿ-ն հիմնվում է իր սեփական փորձառության, ինչպես նաև բազմաթիվ քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի փորձի վրա՝ որոնք փաստում են, որ ցմահ ազատագրվման դատապարտված անձինք անպայմանորեն ավելի վտանգավոր չեն, քան մյուս բանտարկյալները (տես նաև 72-րդ պարբերությունը): Նրանցից շատերը լրջորեն դրդված են ունենալ կայուն և բախումներից զերծ միջավայր: Նմանապես՝ նրանք, ովքեր իրենց պատիժը կրելու սկզբում վտանգավոր էին համարվում, կարող են զգալիորեն պակաս վտանգավոր դառնալ ոչ միայն տնական ազարտագրվման ընթացքում, այլև նպատակաուղղված միջոցառումների և մարդկային վերաբերմունքի շնորհիվ: Ցմահ ազատագրվման դատավճռի կիրառումից հետո անհատականացումը պետք է իրականացվի պատժի պլանավորման գործընթացի միջոցով, հիմք առնելով անհատի վիճակի գնահատումը: Դա պահանջում է երկարատև նախնական գնահատում, որը նախընտրելի է, որ իրականացվի հատուկ հատկացված վայրում համապատասխան անձնակազմի՝ քրեակատարողական հիմնարկի փորձառու և հատուկ վերապատրաստված ծառայողների, հոգեբանների, մանկավարժների և սոցիալական աշխատողների կողմից: Հոգեկան առողջության հնարավոր խնդիրների նշանների առկայության դեպքում անհրաժեշտ է ներգրավել նաև հոգեբույժ: Ազատագրված անձի հետ համագործակցող այդ թիմի խնդիրը թե՛ կալանավայրում և թե՛ համայնքի ներսում

նրա վիճակի և կարիքների մասին հնարավորինս լիարժեք պատկերացում կազմելն է, որպեսզի իրականացվեն կոնկրետ միջոցառումներ քրեակատարողական հիմնարկում մնալը հնարավորինս օգտակար դարձնելու ուղղությամբ՝ բացահայտված կարիքներին անդրադառնալու և ազատ արձակմանը նախապատրաստվելու առումով: Պետք է կիրառվեն ռիսկերի և կարիքների գնահատման հավաստարմագրված միջոցներ՝ որոնք պետք է փոխլրացվեն մասնագիտական դատողությամբ⁷: Ստացված վերլուծությունը և պլանը, որում հնարավորինս պետք է ներգրավված լինի նաև ազատազրկված անձը, դառնում է հիմնական փաստաթուղթ այդ բանտարկյալի հետ աշխատող բոլոր անձանց համար: Այն պետք է կանոնավոր կերպով վերանայվի, իսկ վերանայման արդյունքները պետք է հաղորդել ազատազրկված անձին:

Պատժի կրման պլանի իրականացումը

77. *Պատժի կրման պլանի իրականացման ուղղորդող սկզբունքները միանգամայն նույնն են բոլոր ազատազրկված անձանց համար:* Ազատազրկված անձինք չպետք է ենթարկվեն որևէ սահմանափակման, որը չի բխում քրեակատարողական հիմնարկում կարգուկանոնի, անվտանգության և կարգապահության պահպանման կարիքներից: Մասնավորապես՝ յուրաքանչյուր անձի նկատմամբ կիրառվող անվտանգության մակարդակը պետք է համաչափ լինի այդ անձի ներկայացրած վտանգին: Հանցագործության բնույթը սպառնալիքը գնահատելու գործոններից միայն մեկն է: Սկզբունքորեն *ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ կիրառվող կալանքի ռեժիմը պետք է որոշեն քրեակատարողական հիմնարկի իշխանությունները, և այն միշտ պետք է հիմնված լինի ազատազրկված անձի անհատական վիճակի գնահատման վրա, այլ ոչ թե լինի կիրառվող պատժատեսակի ավտոմատ արդյունքը* (այսինքն՝ պատիժը նշանակող դատավորը չպետք է որոշի ռեժիմը):

78. Նմանապես, բացի գնահատման փուլից, *ցմահ ազատազրկման դատապարտված անձինք չպետք է, որպես կանոն, առանձին պահվեն ազատազրկված այլ անձանցից*, թեև անցանկալի չէր լինի երկարաժամկետ ազատազրկված անձանց շատ կարճ ժամկետով ազատազրկված անձանցից առանձին պահելը: Պատժի տևողությունն անպայմանորեն կապված չէ այն ռիսկի մակարդակի հետ, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձինք կարող են ներկայացնել քրեակատարողական հիմնարկի ներսում, իսկ նորմալացման սկզբունքը պահանջում է, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձինք առնվազն կարողանան հաղորդակցվել երկարաժամկետ ազատազրկման դատապարտված այլ անձանց հետ, ովքեր ունեն ազատ արձակման նախորոշված օր: Թեկուզև սահմանափակ, բայց այն շարժը, որ դա կարող է ստեղծել, թարմացնում է բանտային փորձառությունը նրանց համար, ովքեր պատիժ են կրելու բավական երկար ժամանակ:

Ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հատուկ մասնագիտացված քրեակատարողական հիմնարկում կենտրոնացնելը ևս նշանակում է հեռու պահել նրանց իրենց ընտանիքների և արտաքին աշխարհի հետ հաղորդակցումից: Ցմահ

⁷ Տես՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec (2014) 3 հանձնարարական անդամ պետություններին՝ վտանգավոր հանցագործների վերաբերյալ:

ազատագրվումն արդեն իսկ մեծ փորձություն է է այդ հարաբերությունների համար : Ազատագրված անձին տանից էական հեռավորության վրա տեղակայումը բարդացնում է իրավիճակը և կրճատում է վերասոցիալացումը խթանող այդ կարևոր գործոնի ազդեցությունը և պահպանումը: : Բացի այդ, որևէ լրացուցիչ սահմանափակում չպետք է կիրառվի ցմահ ազատագրվման դատապարտված անձանց նկատմամբ այլ ազատագրվածների համեմատ, երբ խոսքը վերաբերում է իրենց ընտանիքների և այլ մերձավորների հետ հաղորդակցվելու հնարավորություններին: Ազատագրվման առաջին տարիներին, մասնավորապես, հաղորդակցման սահմանափակումները կարող են խաթարել կամ նույնիսկ խորտակել այդ հարաբերությունները: Կարևոր է նաև, որ ցմահ ազատագրվման դատապարտված անձանց համար կանոնավոր կերպով մատչելի լինեն տեսակցությունները, հեռախոսազանգերը, նամակագրությունը, թերթերը, ռադիոն և հեռուստացույցը՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու զգացումը պահպանելու համար:

79. Յմահ ազատագրվման դատապարտված անձանց համար *լիարժեք ռեժիմի միջոցառումները պետք է հնարավորինս լինեն մատչելի* և որպես կանոն՝ ազատագրված այլ անձանց հետ միասին: Աշխատանքը, կրթությունը, սպորտը, մշակութային միջոցառումները և հոբիները ոչ միայն օգնում են անցկացնել ժամանակը, այլև խիստ կարևոր են սոցիալական և հոգեկան առողջության խթանման, բարեկեցության և փոխանցելի հմտությունների հաղորդման համար, որոնք օգտակար կլինեն կալանքի ժամանակահատվածի ընթացքում և դրանից հետո: Ազատագրված անձանց ներգրավումն այս միջոցառումներին՝ խնդրահարույց վարքագծի հետ կապված միջամտություններին նրանց մասնակցության հետ միասին, յուրաքանչյուր բանտարկյալի գործունեության ընթացիկ գնահատման կարևոր գործոն է: Դրանք հնարավորություն են ընձեռում անձնակազմի բոլոր անդամներին ավելի լավ հասկանալ բանտարկյալներին և օգնում անձնակազմի աշխատակիցներին հիմնավորված որոշումներ կայացնել առ այն, թե երբ նպատակահարմար կլինի ազատագրված անձի նկատմամբ կիրառել այդ ռեժիմը և անվտանգության ավելի ցածր պայմանները: Նման առաջընթացի հնարավորությունը խիստ կարևոր է քրեակատարողական հիմնարկի ղեկավարության և բանտարկյալի համար: Այն մոտիվացնում և խրախուսում է ազատագրված անձանց՝ տրամադրելով ինքնարտահայտման հնարավորություն իրենց այլապես անորոշ աշխարհում, և երաշխավորում է ավելի խորը հարաբերություններ գնահատող անձնակազմի և ազատագրված անձի միջև, ինչը նպաստում է *դինամիկ անվտանգությանը*:

Իրավամբ, գնահատման գործընթացում դինամիկ անվտանգության արդյունավետ իրականացումը պետք է վճռորոշ լինի՝ որոշելու, թե երբ է ապահով ազատագրված անձին թույլ տալ մուտք գործել համայնք՝ սկզբում ուղեկցությամբ կարճաժամկետ արձակուրդի ձևով, ապա և անցնել առանց ուղեկցության գիշերային արձակուրդի և ի վերջո պայմանական ազատ արձակմանը և համայնք վերադառնալուն: Լավ անձնակազմը պետք է խորը պատկերացում կազմած լինի այդ անձի վերաբերյալ, ինչի մասին նրանք կարող են հայտնել որոշում կայացնող մարմիններին և համայնքում վերահսկողության և աջակցություն ցուցաբերելու պատասխանատվությունը ստանձնողներին: Գոյություն ունեցող շատ համակարգեր անտեսում են անձնակազմի հետ նման համագործակցությունը, հատկապես՝ անվտանգության ծառայության

ստորադաս անդամների, ովքեր սովորաբար ամենաշատն են շփվում ազատագրված անձանց հետ: Նրանց հաճախ չի խրախուսվում կամ նույնիսկ արգելվում է խորությամբ ծանոթանալ ազատագրվածների հետ, և արդյունքում բաց է թողնվում անձնակազմի և ազատագրված անձանց միջև դրական հարաբերություններ ստեղծելու հրաշալի հնարավորությունը: Նման հարաբերությունները պատշաճ սահմաններում ոչ միայն նպաստում են անվտանգությանը, այլև մոտիվացնում են ազատագրված անձանց համագործակցել ռեժիմի հետ, իսկ անձնակազմը ստանում է բանտային աշխատանքի շատ ավելի դրական փորձառություն, քան կարող է ստանալ քրեակատարողական հիմնարկի զուտ բանտապահի գործառույթներ կատարող ծառայողը: Անշուշտ, դա պահանջում է պատշաճ անձնակազմի ընտրություն, վերապատրաստում, վերահսկում և համակարգի այլ մասնագետների կողմից աջակցություն: Սակայն, ինչպես ցույց են տվել մի շարք անդամ պետությունների փորձը և ԽԿԿ-ի դիտարկումները, օգուտները ակնհայտ են:

80. Անկասկած, ցմահ ազատագրվածն աստապարտված որոշ անձինք խիստ վտանգավոր են: Սակայն մոտեցումը պետք է լինի նույնը, ինչ մյուս ազատագրվածն աստապարտվածների համար՝ ներառելով ազատագրված այդ անձանց անհատական վիճակի մանրամասն գնահատումը, ռիսկերի կառավարումը՝ անձի կարիքներին անդրադառնալու և երկարաժամկետ հեռանկարում կրկին հանցագործություն կատարելու հավանականությունը նվազեցնելու ծրագրերով՝ մինչև նույն ժամանակ տրամադրելով պաշտպանության անհրաժեշտ մակարդակ այլոց համար, ինչպես նաև անվտանգության միջոցների կանոնավոր վերանայումը: Նպատակը, ինչպես բոլոր վտանգավոր ազատագրված անձանց դեպքում, պատշաճ միջամտությունների միջոցով վտանգավորության մակարդակը նվազեցնելն է և ազատագրված անձանց հնարավորինս շուտ բնականոն կենսակերպի վերադարձնելը:

Եզրակացություն

81. ԽԿԿ-ն կոչ է անում անդամ պետություններին վերանայել ցմահ ազատագրվածն աստապարտված անձանց նկատմամբ իրենց վերաբերմունքը՝ երաշխավորելու, որ այն համահունչ է այն անհատական ռիսկին, որ նրանք ներկայացնում են թե՛ կալանքի տակ և թե՛ արտաքին աշխարհի համար, այլ ոչ թե զուտ ի պատասխան նրանց հանդեպ կիրառվող պատժին: Մասնավորապես՝ անդամ պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն ցմահ ազատագրվածն աստապարտված անձանց այլ (երկարաժամկետ) ազատագրված անձանցից առանձին պահելու իրավական պարտավորությունը վերացնելու ուղղությամբ և վերջ դնեն քրեակատարողական հիմնարկի ներսում անվտանգության միջոցների, ինչպես օրինակ՝ ձեռնաշղթաների կանոնավոր օգտագործմանը:

82. Բացի այդ, բոլոր հնարավոր ջանքերը պետք է գործադրվեն՝ ապահովելու ցմահ ազատագրվածն աստապարտված անձանց այնպիսի ռեժիմ, որը համապատասխանեցված կլինի նրանց կարիքներին և կօգնի կրճատել նրանց ներկայացրած ռիսկի մակարդակը՝ նվազեցնելով այն վնասը, որ անխուսափելիորեն առաջացնում են անորոշ ժամկետով պատիժները, պահպանելով դատապարտված անձանց կապն արտաքին աշխարհի հետ, նրանց հնարավորություն ընձեռելով

թույլտվության հիման վրա ազատ արձակվել դեպի համայնք և երաշխավորելով, որ ազատ արձակվելը կարող է շնորհվել անվտանգ կերպով գոնե դեպքերի ճնշող մեծամասնության պարագայում: Այս նպատակով պետք է մշակվեն պատիժների վերանայում ենթադրող ընթացակարգեր: Ակնհայտ է, որ որոշակի ժամանակ անց ազատման համար դիմելու զուտ ձևական հնարավորություն ունենալը բավարար չէ: Անդամ պետությունները պետք է երաշխավորեն, մասնավորապես՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ իրենց վերաբերմունքով, որ այս հնարավորությունն իրական է և արդյունավետ: